Հովհաննես Թումանյան

Էսպես չի մնա

(Հին գրույց)

Լինում է թե չէ, ո՞վ գիտի հաստատ.
Եվ ի՞նչն է հաստատ աշխարքի վրրա...
Աշխարքում հաստատ մի բան կա մենակ,
Այն է, որ հաստատ ոչ մի բան չկա:

Լինում է՝ իբրև գյուղացի մի մարդ,
Աղքատ, օրական ապրուստի կարոտ:
Ունենում է սա մի խելոք տղա,
Տանում է ծառա տալի մեկի մոտ:

Տարիք են անցնում: Էս խելոք տղեն

Էնպես է ազնիվ ու ժիր ծառայում,
Որ տերն էլ սրրա վարձը շատացնում,
Ինչպես իրենը՝ էնպես է նայում:
Հիշում է մի օր հայրը իր որդուն
Ու վեր է կենում գալի տեսություն.

Հը՞, ո՞նց ես, որդիս, հիմի էլ էնպես
Էլ մերկ ու տրկլոր, էլ քաղցած հո չե՞ս:
Չէ՛, լավ եմ, հայրիկ, ապրուստս միշտ կա,
Բայց ի՞նչ անես որ... էսպես չի մրնա...

Գընում է հայրը: Տարիք են անցնում:

Առաջ է գընում տըղեն օրն օրին,
Վերջը բարձրանում, պալատն է հասնում,
Դառնում է ծառա մեծ թագավորին:
Հիշում է մի օր հայրը իր որդուն
Ու վեր է կենում գալի տեսություն.

Հը՞, ո՞նց ես, որդիս, էլ ի՞նչ ես ուզում,
Լողում ես առատ էս լիքը ծովում:
Հա՛, լի եմ, հայրիկ, դու հանգիստ գընա,
Բայց ի՞նչ անես որ... էսպես չի մընա...

Գընում է հայրը: Տարիք են անցնում:

Էնքան է սիրվում մեր խելոք ծառան,
Որ թագավորը բերում է սըրան
Իրեն տերության երկրորդն է անում:
Հիշում է մի օր հայրը իր որդուն
Ու վեր է կենում գալի տեսություն.

Հը՞, ո՞նց ես, որդիս, էլ ի՞նչ է մընում,
Քու խոսքովն են ողջ նըստում–վեր կենում:
Հա՛, մեծ եմ, հայրիկ, նազիր եմ ահա,
Բայց ի՞նչ անես որ... էսպես չի մընա...

Գընում է հայրը: Տարիք են անցնում:

Էս բարի երկրի թագավորը ծեր
Մի օր անժառանգ ընկնում է մեռնում,
Գահն ու աշխարքը մընամ են անտեր:
Ժողովք են կանչում երկրի մեծերին:
Ժողովք են գալի, խորհուրդ են անում,

Բերում են իրենց խելոք նազիրին
Առքով ու փառքով թագավոր դընում,
Ու մեր գյուղացին լըսում է մի օր՝
Դարձել է իրեն որդին թագավոր:
Գալիս է. Որդի՛ս, էլ ի՞նչդ է պակաս,

Ամբողջ աշխարքում մի դու ես, որ կաս...
Փառք աստծու, հայրիկ, ունեմ թագ ու գահ,
Բայց ի՞նչ անես որ... էսպես չի մընա...

Գընում է հայրը: Տարիք են անցնում:
Իր գահին բազմած ինքնակալը նոր

Մահվան ու կյանքի վճիռ է անում՝
Բուռը հավաքած աշխարքը բոլոր:
Բուռդ հավաքի աշխարքը թեկուզ,
Թողնելու ես ողջ դարձյալ աշխարքին:
Մեր թագավորն էլ մի անգամ էսպես

Մահիճ է ընկնում, ավանդում հոգին:

Լըսում է ծերուկ հայրը մի օր էլ,
Որ իր թագավոր որդին չըմնաց:
Ի՞նչ ասել կուզի գալիս է վըրեն,
Էլ ի՛նչ մըղկըտոց, էլ ի՛նչ սուգ ու լաց...

Ջորքով, աշխարքով, ծեսով, հանդեսով
Արքային վայել թաղում են անում,
Ու վեր են կենում՝ զըրույց անելով
Ամենքը իրենց տըներն են գնում:
Տարիք են անցնում: Հայրը մի անգամ

Գալիս է որդու շիրիմի վրա:
Գալիս է, տեսնում՝ մարմար մահարձան,

Բայց վրրեն գրած... «Էսպես չի մընա...»:

Գընում է հայրը: Տարիք են անցել.
Ո՞վ կարա մեզնից հաշիվն իմանա...

Էն օրից էսօր անվերջ, դարեդար
Ջրույցն ասում է «Էսպես չի մընա...»
Ու չըկա շըքեղ արձանն արքայի,
Ոչ նրա քաղաքն աշխարքի վրրա,
Մերն է աշխարքը ու կյանքը հիմի,

Բայց մեր աշխարքն էլ... էսպես չի մընա..

1908